ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ԵՀԲՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆԳ ՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 19-ը մայիսի 2021թ.
Ժամը 15^{00}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
Երևանի հենակետային բժշկական քոլեջի տնօրենի տեղակալ վարչատնտեսական աշխատանքների գծով, Կ. Հարությունյան,

գնահատող՝
Երևանի հենակետային բժշկական քոլեջի հաշվապահ, Ա. Սարգսյան,

հանձնաժողովի քարտուղար՝
Մ. Մկրտչյանը:

Բացակայում է՝

գնահատող՝
Երևանի հենակետային բժշկական քոլեջի հաշվետար-գանձապահ, Ռ. Չիչյան,

Հանձնաժողովն արձանագրեց հայտերի բացման փաստը և որոշեց նիստը շարունակել մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո:

19.05.2021թ., ժամը 15:45-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

«ԵՀԲՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ. Մկրտչյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ԵՀԲՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ԵՀԲՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
6. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2 դեմ՝ 0:

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Մ. Մկրտչյան)

1.1 «ԵՐԵՎԱՆԻ ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՓԲԸ-ի կարիքների համար «Մարդատար մեքենաներ» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՀԲՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանումը
1.	ՖԱ Հովհաննես Բաղդասարյան Էդուարդի
2.	«Համազասպ Հովսեփյան Աշոտի» ԱՁ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

2. «ԵՀԲՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Մ. Մկրտչյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների **Armeps (www.armeps.am)** համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ԵՀԲՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, ***բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.***

Գնահատող հանձնաժողովը «Համազասպ Հովսեփյան Աշոտի» ԱՁ-ի կողմից ներկայացված՝ հրավերով պահանջող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1)՝

- **«արտադրողի անվանումը»** սյունակում լրացվել է երկրի վերաբերյալ տեղեկատվություն, ինչը գնման ընթացակարգի հրավերով չէր պահանջվել: Անհրաժեշտ է նշված սյունակում լրացնել հրավերով պահանջվող տեղեկատվությունը:
- **«տեխնիկական բնութագրերը»** դաշտում նշվել է՝
  - թափքը՝ սեդան կամ հետչբեք,
  - Թողարկման տարեթիվը՝ սկսած 2010 թվականից ոչ ավել 2012 թվականից,
  - Հզորությունը՝ ոչ պակաս 116 ոչ ավել 196 ձ/ուժ,
  - Արտաքին չափսերը՝ երկարությունը՝ 4200±350մմ, լայնությունը՝ 1690±100մմ, բարձրությունը՝ 1440±100մմ,
  - Վառելիքի ծախսը՝ ծախս 100 կմ քաղաքում ոչ ավել 10 լիտր, քաղաքից դուրս ոչ ավել 7 լիտր,
  - Սրահը՝ կտորե սրահ կամ համարժեք,
  - Վազքը՝ ոչ ավել քան 180 000 կմ
- **ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում է հրավերով պահանջվող մեքենայի գույնի վերաբերյալ տեղեկատվությունը:**

Վերոնշյալով պայմանավորված՝ անհրաժեշտ է տեխնիկական բնութագրում կատարել շտկում և նշել հստակ առաջարկվող ապրանքատեսակի նկարագրությունը և պարամետրերը, միաժամանակ ներկայացված առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը հստակեցնել բացառելով ***«կամ համարժեք»*** արտահայտությունը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «Համազասպ Հովսեփյան Աշոտի» ԱՁ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

21.05.2021թ., ժամը 10:10-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ «Համազասպ Հովսեփյան Աշոտի» ԱՁ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները և վերջինիս հայտը գնահատեց բավարար՝ հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Մ. Մկրտչյան)

3.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Գնման առարկա	Չ/մ	Քանակը	Նախահաշվային ընդհանուր գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների				
					Հ/հ	Անվանումները	Գնային առաջարկ /ՀՀ դրամ/		
							Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1.	Մարդատար մեքենաներ	հատ	1	2,800,000	1.	ՏԱ Հովհաննես Բաղդասարյան Էդուարդի	2,790,000	0	2,790,000
					2.	«Համազասպ Հովսեփյան Աշոտի» ԱՁ	2,800,000	0	2,800,000

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Ըստ ներկայացված տվյալների մասնակիցներն ԱԱՀ վճարող չեն:

3.4 Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ԵՀԲՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Մ. Մկրտչյան)

4.1 21.05.2021թ.-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ԵՀԲՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել ***«Հովհաննես Բաղդասարյան Էդուարդի» ՁԱ-ին:***

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ԵՀԲՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ԵՀԲՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Մ. Մկրտչյան)

5.1 «ԵՀԲՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

6. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Մ. Մկրտչյան)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ. Մկրտչյան)

«ԵՀԲՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 15:00-ն, ք. Երևան, Կորյունի փող., 10 շենքի հասցեում՝ «Երևանի հենակետային բժշկական քոլեջ» ՓԲԸ-ի նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Կ. Հարությունյան
Գնահատող	Ա. Սարգսյան
Գնահատող	Ռ. Չիչյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Մ. Մկրտչյան